Հավիտենական
կյանքը

ՉՐԻ

Պարգև է

մի պահ երևում է և ապա անհետանում», (Հակ. 4.14):

Դուք ինքներդ չեք կարող փրկել ձեզ

Աստվածաշունչն ասում է. «Գիտենք, որ որևէ մարդ Օրենքը գործադրելով չի արդարանում», (Գաղ. 2.16ա): Այն նաև ասում է. «Բայց ամենքս պիղծ բանի պես եղանք ու մեր բոլոր արդար գործերը անմաքուր լաթի պես են», (Եսայի 64.6ա):

Փրկությունը ձրի է բոլորի համար

Աստվածաշունչն ասում է. «Ով որ Տիրոջը օգնության կանչի, կփրկվի», (Հռ. 10.13): Աստվածաշունչն ասում է. «Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին», (Ա Տիմ. 1.15բ): «Ինքը՝ Քրիստոսն էլ, մեկ անգամ չարչարվեց մեր մեղքերի համար, արդարը՝ մեղավորներիս համար, որպեսզի մեզ մոտեցնի Աստծուն», (Ա Պետ. 3.18ա):

Եթե դուք չփրկվեք...

Աստվածաշունչն ասում է.«Նրանց տանջանքի ծուխը կբարձրանա հավիտյանս հավիտենից: Գիշեր ու ցերեկ հանգիստ չեն ունենա նրանք», (Հայտ. 14.11ա): «Որովհետև մեղքի վարձը մահն է», (Հռ. 6.23ա): Այս մահը ֆիզիկական մահից ավելի դաժան է: Այն «հավերժ տանջանք է»: Աստվածաշունչն ասում է. «Բայց վախկոտների, անհավատների, պիղծերի, մարդասպանների, պոռնիկների, կախարդների, կռապաշտների և բոլոր ստախոսների բաժինը կրակով և ծծումբով այրվող լիճն է, որ երկրորդ մահն է», (Հայտ. 21.8):

Ինչպես դուք կարող եք փրկվել

Աստվածաշունչը կոչ է անում «ապաշխարություն դեպի Աստված», (Գործք 20.21բ): Ապաշխարությունը սիրտը փոխելն է, որը մարդուն դարձի է բերում Աստծուն և հեռացնում է նրան իր ներկա ապրելակերպից: Ընդունեք Աստվածաշնչի փաստերը, որ դուք մեղավոր եք նրա առջև և որ դուք անկարող եք ինքներդ ձեզ փրկել դժողքից, որին դուք արժանի եք ձեր մեղքերի պատճառով:

Աստվածաշունչը կոչ է անում. «հավատ դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոսը», (Գործք 20.21բ): Հավատը ամբողջ վստահությունը Հիսուս Քրիստոսի վրա

Տեր Հիսուս Քրիստոսը վճարեց ամբողջ գումարը մեր հոգու փրկության համար: Նա «Իր անձը տվեց մեր մեղքերի համար», (Գաղ. 1.4ա): Հիսուսը, Աստծու Որդին. «սիրեց ինձ և իր կյանքը զոհեց ինձ համար», (Գաղ. 2.20բ): Իսկ հիմա, քանի որ. «Նա մեկընդմիշտ մտավ սրբարանը ոչ թե նոխազների և ցուլերի արյունով, այլ իր իսկ սեփական արյունով՝ դրանով հավիտենական փրկություն ապահովելով մեզ համար», մեզ համար ոչ մի գումար չկա վճարելու, (Եբր. 9.12): Աստված մեզ. «արդարացնում է ձրիաբար իր պարգևած շնորհով», (Հռ. 3.24ա): «Ավարտված է», (Հովհ. 19.30բ):

Բարի գործեր կատարելը ձեզ չի փրկի

Փրկությունը՝ «ձեր գործերով չէ ձեռք բերված, որպեսզի ոչ ոք չպարծենա», (Եփես. 2.9): Աստված՝ «փրկեց մեզ և հրավիրեց մեզ իր սուրբ ժողովուրդը լինելու ոչ թե մեր արժանիքների համար, այլ համաձայն իր ծրագրի և այն շնորհի, որ մեզ էր տրվել Հիսուս Քրիստոսի միջոցով՝ հավիտենական ժամանակներից իսկ առաջ», (Բ Տիմ. 1.9):

Աստվածաշունչը, որը Աստծու Խոսքն է, ասում է. «Չկա արդար մարդ, ոչ իսկ մեկ հոգի», (Հռ. 3.10): «Բոլոր մարդիկ մեղանչեցին և զրկված են մնում Աստծու փառքից», (Հռ. 3.23): Պրոբլեմը հենց մեղքն է և նույնիսկ եկեղեցու անդամ լինելը չի կարող ջնջել այն: Հիսուս Քրիստոսն ասաց. «Լավ իմացիր, որ եթե մեկը վերստին չծնվի, չի կարող տեսնել Աստծու արքայությունը», (Հովհ. 3.3բ): Ինչպես Աստվածաշունչն է ասում. «մարդ իր հավատով է արդարանում, առանց Օրենքի գործերի», (Հռ. 3.28): «Այո, դուք փրկվեցիք Աստծու շնորհով, քանի որ հավատացիք: Փրկությունը ձեր արժանիքը չէ, այլ պարգևն է Աստծու», (Եփես. 2.8):

Դուք չպետք է սպասեք հարմար առիթի

Աստվածաշունչն ասում է. «և ինչպես մարդիկ մեկ անգամ են մեռնում և դրանից հետո Աստծու դատաստանին հանձնվում», (Եբր. 9.27): Դուք չգիտեք թե ինչքան եք ապրելու: «Մի՞թե գիտեք, թե վաղն ինչ եք լինելու: Ձեր կյանքը նման է մշուշի, որ

դնելն է որպես միակ միջոցը մեղքը քավելու և հոգին ազատելու դժողքից: Աստվածաշունչն ասում է. «...հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, և դու կփրկվես», (Գործք 16.31ա): Եթե դուք սրտանց ընդունեք Հիսուս Քրիստոսին վստահելով որ Նա կփրկի ձեր հոգին, դուք կդառնաք Աստծու որդիներ և կանցկացնեք հավիտենականությունը երկնքում: «Իսկ Իրեն ընդունողներին և Իրեն հավատացողներին Նա իշխանություն տվեց Աստծու որդիներ լինելու», (Հովհ. 1.12): Աստված խոստանում է փրկել ձեզ, եթե դուք վստահեք Հիսուս Քրիստոսին որպես ձեր փրկիչը: «Որովհետև եթե քո բերանով խոստովանես, թե Հիսուսը Տեր է, և քո սրտում հավատաս, թե Աստված նրան հարություն տվեց մեռելներից, կփրկվես», (Հռ. 10.9): Ընդունեք Աստծու առաջարկած հավիտենական կյանքի «ձրի պարգևը»:

Հիսուս Քրիստոսն ասաց. «Եկեք ինձ մոտ դուք բոլորդ, հոգնածներ և բեռնավորվածներ, և ես պիտի հանգիստ տամ ձեզ: Վերցրեք իմ լուծը ձեզ վրա և սովորեցեք ինձնից, որովհետև հեզ եմ ու սրտով խոնարհ, և դուք ձեր հոգեկան հանգստությունը պիտի գտնեք, քանի որ իմ լուծը տանելի է, և իմ բեռը՝ թեթև», (Մատթ. 11.28-30): Եթե դուք ընդունեք Հիսուս Քրիստոսին որպես ձեր Տերը և Փրկիչը, ապա խնդրում եմ սրտանց աղոթեք.

Սիրելի Աստված՝ ողորմիր ինձ, մեղավորիս: Ներողություն եմ խնդրում քեզնից իմ մեղքերի համար, և հիմա արդեն հավատում եմ որ Տեր Հիսուս Քրիստոսը կփրկի ինձ: Հիմա ես վստահում եմ Իրեն որպես իմ Տերը և Փրկիչը: Ես դիմում եմ քեզ հավիտենական կյանքի համար, որը Քրիստոսը վճարեց իր սեբական արյունով: Ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունից: Ամեն:

FELLOWSHIP TRACT LEAGUE
P.O. BOX 164 • LEBANON, OH 45036
www.fellowshiptractleague.org © Tract 3520 (Armenian)
All tracts free as the Lord provides. Not to be sold.